Մաժինյան Արմինե
ՎՊՄԻ պատմաաշխարհագրական ֆակուլտետ, 3-րդ կուրս
էլ. փոստ՝ vspiphilpol@mail.ru

ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ (9-11-ՐԴ ԴԴ.)

Այստեղ զգում եմ ինձ հպարտ, ազատ, վեհ, մտքերս թռիչք են գործում, ճնշում չկա ուսերիս վրա, հորս տանն եմ, դարերով հորս տանը, թվում է, որ միշտ այստեղ եմ գտնվել. այստեղ եմ հասակ առել և հավիտյան այստեղ եմ լինելու՝ այս հավիտենական գեղեցկության հետ
Ավետիք Իսահակյան

9-րդ դ. կեսից սկսած վերականգնվեց Բագրատունյաց Հայաստանի քաղաքական անկախությունը: Հայաստանը թևակոխեց տնտեսական զարգացման շրջան, զարգացավ նաև քաղաքային կյանքը: Հայ պատմագիր Արիստակես Լաստիվերտցին Բագրատունյաց Հայաստանը նկարագրում է որպես մի «փարթամ այգի»[1]:

9-11-րդ դդ. ավատատիրական կացութածևը Հայաստանում թևակոխեց իր նոր՝ զարգացած փուլը[2]: Քաղաքների թվի աննախընթաց աճը որակական նոր փոփոխություններ առաջացրեց ավատական հարաբերության ու դրանով ոգեկոչված նոր՝ առավել առաջադիմական աշխարհայացքի ձևավորմանը, որը որոշակի ներգործություն ունեցավ հայ ժողովրդի հոգևոր ու նյութական կյանքի տարբեր ոլորտների վրա:

Իր բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովրդի ստեղծած հոգևոր ու նյութական ժառանգության մեջ ճարտարապետությունը գրավել ու գրավում է ամենաառաջնակարգ տեղերից մեկը: Անին իրավամբ համարվում է «թանգարան բաց երկնքի տակ», քանի որ այդ քաղաքում է գտնվում Հայաստանի ամենամեծ հուշարձանախումբը:

Անին, որ դարձավ երկրի քաղաքական, վարչական, առևտրաարհեստավորական և մշակութային նշանավոր կենտրոն, միևնույն ժամանակ Բագրատունյաց ժամանակաշրջանի ճարտարապետական նոր ոճի և քաղաքաշինական արվեստի կազմավորման օջախ էր[3]: Անիում զարգացած էին ճարտարապետական արվեստի հիմնական բնագավառները՝ պաշտամունքայինը և քաղաքացիականը: Ճարտարապետական-գեղարվեստական նվաճումները ուղեկցվում էին շինարարական տեխնիկայի հետագա զարգացմամբ ու կատարելագործմամբ: Չնայած, որ Անիի շրջակայքը հարուստ էր բազալտով, 9-11-րդ դդ. քաղաքի շինարարության համար բազալտ հազվադեպ էր օգտագործվում, այն գերազանցապես տուֆակերտ քաղաք էր: Կարևոր բոլոր հուշարձանների պատերը և՛ ներսից, և՛ դրսից շարված են եղել սրբատաշ քարերով, իսկ հետագա շրջանում տարածում է գտել նաև երկգույն՝ սև ու դեղին (կամ սև ու կարմիր) քարերով «շախմատաձև» քարապատումը:

Այս ժամանակաշրջանում Անիում ձևավորվում է հայ ճարտարապետության անիական ոճը, որն իր բարերար ազդեցությունն է թողնում հետագա ժամանակների հայկական ճարտարապետության վրա, և որի նշանակությունը դուրս է գալիս ազգային ճարտարապետության սահմաններից[1]:

Անիի պաշտամունքային հուշարձանները դասական են: Ընդհանրապես, 10-11-րդ դդ. պաշտամունքային հուշարձանները ընդհանուր առմամբ իրենց վրա կրում էին նախաարաբական շրջանի՝ հատկապես 7-րդ դ. հայկական եկեղեցական ճարտարապետության կնիքը[2]: Հատակագծային ու ծավալատարածական լուծումների տեսակետից Անիի եկեղեցիներից շատերն ունեին այնպիսի գծեր, որոնք վկայում էին մինչարաբական շրջանում մշակված տիպերի հաջորդակցական շարունակության մասին (Զվարթնոցի նմանությամբ կառուցված էր Անիի Գագկաշեն տաճարը, Մայր տաճարը նույնպես նախաարաբական շրջանի գմբեթավոր բազիլիկայի վերարտադրություն էր, Առաքելոց եկեղեցին կառուցված էր Սբ. Էջմիածնի նմանությամբ, Ապուղամրենց, Սբ. Փրկիչ և Հովվի եկեղեցիները դարձյալ նման էին 7-րդ դ. բազմաբսիդ տաճարների տիպին և այլն): Ներքին ու արտաքին ճարտարապետության լուծումներից պարզ երևում են նոր ոճական հատկություններ, որոնք համապատասխանում էին տվյալ դարաշրջանի գեղարվեստական ըմբռնումներին[3]:

Միջնադարյան Հայաստանի ոչ մի քաղաք այնքան բազմաթիվ եկեղեցիներ չի ունեցել, որքան Անին: Հայ և օտար բազմաթիվ պատմիչներ, ժամանակագիրներ ու ուղեգիրներ Անիի կիսաավանդական պատմությանը վերագրել են 1001 եկեղեցի՝ այն կոչելով «1001 եկեղեցիների քաղաք»: Ալ-Ասիրը հաշվում է ավելի քան 500 եկեղեցի: Ավելի ուշ շրջանում, 1255 թ. Անի այցելելով՝ ֆրանսիացի դիվանագետ ու հոգևորական Ռուբրուքը հայտնում է, որ քաղաքում «կան հայերի հազար եկեղեցի և արաբական երկու մզկիթ»: Վենսենտ դը Բովեն ևս հաստատում է, որ «Հայաստանում կա մի հոյակապ քաղաք, կոչված Անի, ուր կա հազար եկեղեցի և հարյուր հազար ընտանիք ...»[4]:

Բագրատունյաց թագավորության շրջանի Անիի ամենահայտնի

[1] Հակոբյան Թ., Անիի պատմությունը, Երևան, 1980, էջ 82-83:
[2] Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 186:
[3] Նույն տեղում, էջ 189:

[1] Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 43:
[2] Նույնի, Անի մայրաքաղաք, Երևան, 1988, էջ 90:
[3] Հարությունյան Վ., Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 56:
[4] Վարդանյան Ս., Հայոց մայրաքաղաքները, Երևան, 1985, էջ 109:

ճարտարապետը Տրդատն էր: Նրա կյանքի մասին տեղեկությունները շատ քիչ են: Նրա կյանքի և գործունեության մասին ընդհանուր տեղեկություններ հաղորդում է ժամանակակից պատմագիր Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը[1]: Ճարտարապետ Ստրժիգովսկին Տրդատին կոչում է «Անիի գլխավոր ճարտարապետ», «ավագ ճարտարապետ», դեպի «գոթական ոճը տանող ճանապարհի հայտնագործող», «պալատական ճարտարապետ»:

Անիի եկեղեցաշինության զարդը Մայր տաճարն է, որը մասնագետներից շատերը համարում են նաև Կովկասի ճարտարապետության զարդ[2]: Տրդատ ճարտարապետի այդ բարձրարվեստ ստեղծագործությունը առավել լիարժեք է արտահայտում դարաշրջանի ոճական նոր ուղղությունները, իր ծավալատարածական հորինվածքով ու մասշտաբով իրոք մայրաքաղաքային է: Իբրև մայրաքաղաքի ամենահայտնի կառույցներից մեկը, այն տեղադրված էր քաղաքի բոլոր կողմերից երևացող վայրում, որտեղից իր հերթին դիտողի առջև բացվում էր մայրաքաղաքի ընդհանուր համայնապատկերը. այն գտնվում էր Աշոտյան և Սմբատյան պարիսպների միջև, Ախուրյանի ձորից ոչ հեռու, գեղատեսիլ սարահարթում՝ Միջնաբերդի հետ միասին իշխող դիրք ունենալով ամբողջ քաղաքի վրա: Տաճարի հիմնադրումը կատարվել է 988 թ. Սմբատ II Բագրատունու օրոք: Նրա մահվանից հետո շինարարությունն ավարտվել է Գագիկ I Բագրատունու կնոջ՝ Կատրամիդե թագուհու ջանքերով 1001 թ.: Անիի տաճարն անվանվել է նաև Սուրբ Աստվածածին, ինչպես նաև Կաթողիկե, Կաթողիկե Մայր եկեղեցի, Մայր եկեղեցի, Ավագ եկեղեցի: Տաճարի կառուցման, դրա ճարտարապետական մեծ արժանիքների և զանազան սպասքների նվիրատվության մասին արժեքավոր վկայություններ ունեն պատմագիրներ՝ Ասողիկը, Վարդան Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Սամուել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը[3]: Կարող ենք ասել, որ ամենաարժեքավորը եկեղեցու հարավային պատի վրա, ամենագեղեցիկ երկաթագրով փորագրված Կատրամիդե թագուհու արձանագրությունն է:

Իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով Մայր տաճարը վերարտադրում է 7-րդ դ. գմբեթավոր բազիլիկների (Գայանեի, Էջմիածնի, Մրենի) տիպը: Ընդարձակ աղոթասրահի կենտրոնում տեղադրված չորս հզոր ու փնջավոր մույթերը ու դրանք իրար կապող երկկենտրոն սլաքաձև չորս կամարները կրում են ծածկի ողջ համակարգը՝ գմբեթով հանդերձ, որը սակայն փլվել է 1319 թ. երկրաշարժից: Մյուս կողմից, Տրդատ ճարտարապետը կենտրոնական նավը զգալի

[1] Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, էջ 99:
[2] Նույնի, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 45:
[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 88: Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Երևան, 1986, էջ 300:

լայնացնելու, իսկ կողմնայինների լայնությունը նվազեցնելու միջոցով կարողացել է հասնել վաղ միջնադարյան գմբեթավոր դահլիճներին (Պտղնի, Արուճ, Դմանիսի) հատուկ ներքին տարածության միասնական ընկալմանը: Ապա փնջավոր մույթերի, սլաքաձև կամարների, որմնակամարների օգնությամբ տաճարին հաղորդել է շեշտված վերասլացություն, դինամիկ լարվածություն: Վերասլացությունը (վերտիկալիզմը) դարաշրջանի ոճական առանձնահատկությունն էր: Շնորհիվ վերասլացության եկեղեցական շենքերն ընկալվում էին որպես ընդգծված դինամիկ ու հոյաշեն ճարտարապետական կոթողներ:

Վերասլացության սկզբունքն իր արտահայտությունն է գտել Մայր տաճարի նաև արտաքին հարդարման մեջ՝ բոլոր պատերի պլաստիկական մշակմամբ՝ բարակ սյուների վրա հենվող դեկորատիվ որմնակամարների, խորշերի, նաև գմբեթի թմբուկի ու այն պսակող վեղարի վերասլացությամբ ու այլ միջոցներով: Պատերի հարթությունների հարդարումը, դեկորատիվ այլ և այլ միջոցների (ուղղանկյուն, կամարաձև և կլոր պատուհանների պարակալներ, խորշերի պսակների զարդանախշեր, փնջաձև կիսասյուներով մշակված շքամուտքերը և այլն) կիրառումը ևս նոր մոտեցում է: Տաճարի պատուհանները փոքր են՝ նեղ ու երկար, ունենալով զարդաքանդակ շրջանակներ: Ունի նաև 8 ավելի փոքր ու կլոր պատուհաններ, որոնք գտնվում են շինության ավելի բարձր մասում և գեղազարդ են: Տաճարը կառուցված է դեղին, սև, կարմիր ու գորշ գույնի, ամբողջապես սրբատաշ տուֆից: Տիրապետող գույնը դեղինն է: Տեղեկություններ կան, որ տաճարն ունեցել է ոսկե և արծաթե շատ սպասքներ, մարդու հասակի մեծության արծաթե խաչ, որն ամրացված էր գմբեթի ծայրին, Հնդկաստանից բերված և տաճարի ներսից կախված շքեղ ու թանկարժեք բյուրեղյա ջահ:

Անիի Մայր տաճարը իր ճարտարապետագեղարվեստական արժանիքների շնորհիվ, անշուշտ, առաջատար նշանակություն ձեռք բերեց ոչ միայն Անիում, այլև ողջ Բագրատունյաց շրջանի եկեղեցական ճարտարապետության մեջ: Ընդ որում, այն իր ազդեցությունն է թողել հետագայում Եվրոպայում ձևավորված գոթական ճարտարապետության ոճի վրա[1]:

Մայր տաճարը մեր օրերին է հասել կանգուն վիճակում, սակայն գմբեթը փլվել է 1840 թ. երկրաշարժից:

Մայր տաճարից հետո Անիի երկրորդ հայտնի տաճարը Գագկաշեն (Սուրբ Գրիգոր) եկեղեցին էր: Այն ևս Տրդատի ձեռակերտն է: Ըստ երևույթին, կառուցվել է 1001-1010 թթ. Գագիկ թագավորի օրոք: Թ. Թորամանյանը նշում է, որ Գագկաշենը «չափով, ձևով ոչ մեկ տարբերություն չունի Զվարթնոցեն, միայն զարդաքանդակներն են, որ Զվարթնո-

[1] Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, էջ 118:

ցեն օտար են»[1]: Սա, ինչպես և Զվարթնոցը, կլոր, դրսից բազմանիստ ծավալային կոմպոզիցայով եռահարկ կենտրոնագմբեթ խաչաձև տաճար էր: Գագկաշենը Զվարթնոցի նման ուներ 48 մ բարձրություն և 37,5 մ տրամագիծ, սակայն այն Զվարթնոցից ավելի վերասլաց էր և իշխող դիրք ուներ ամբողջ քաղաքի նկատմամբ: Սակայն Գագիկի եկեղեցու հորինողը չբռնեց Զվարթնոցի տիպին լիովին նմանվելու ուղին և այս տաճարում կատարեց կառուցողական նորամուծություններ՝ անհատականը, որի շնորհիվ նրա ճարտարապետությունը ձեռք բերեց 10-11-րդ դդ. բնորոշ գծեր: Ի տարբերություն Զվարթնոցի, փոքր-ինչ մեծացված են ենթագմբեթային քառակուսու չափերը, ավելացված արտաքին նիստերի քանակը, հինգի փոխարեն տրված են երեք մուտքեր (արևմուտքից, հարավից և հյուսիսից), փոքրացված են արևելյան կողմից կցված ավանդատան չափերը, պահպանելով խաչքևերի սյուների խոյակների ծավալային ձևերը: Դրանք չեն պատվել զամբյուղահյուս զարդաքանդակով, այլ մշակում են ստացել շքամուտքերի ու լուսամուտների երեսակալները, և որ կարևոր է, չնայած դարաշրջանի ճարտարապետական ոճին հատուկ դեկորատիվությանը, առաջին հարկաբաժնի ճակատի նիստերը զուրկ են հարդարանքի միջոցներից[2]: Մյուս կողմից Զվարթնոցի ծանր ու հաստահեղույս սյուներն այստեղ փոխարինված են նրբագեղ, համաչափ ու վերասլաց սյուներով: Եթե Զվարթնոցի ներքին որմնասյուները թվով 64 հատ են, իսկ արտաքինը կազմում է 32 զույգ, ապա Գագկաշենի ներքին սյուների թիվը 72 էր, իսկ արտաքինը՝ 36 զույգ, որոնք, ի տարբերություն Զվարթնոցի՝ կամարներով իրար հետ միացած սյուների, «ընդհատ-ընդհատ» էին:

Կոնստրուկտիվ հիմնական մի թերություն, որ հատուկ է եղել այս տիպի կառուցվածքներին, ստիպել է կառուցումից որոշ ժամանակ անց ամրացնել տաճարի ներքին հիմքերը: Չնայած դրան, Գագկաշենը, ինչպես և Զվարթնոցը, կործանվել են հիմնահատակ և ավելի վաղ, քան Անիի եկեղեցական շենքերը: Գագկաշենի շինարարությունն ավարտելուց 3-4 տարի անց՝ 1013 թ. տաճարը ճեղքվում է և ենթարկվում իսպառ կործանման վտանգին: Տաճարի պահպանման համար տարբեր տեղերում կանգնեցնում են մույթեր, կառուցում ներքին կրկնակի շրջակամարներ, շենքն առնում պաշտպանական օղակի մեջ: Սակայն շուտով, հավանաբար կործանիչ երկրաշարժից, այն վեր է ածվում փլատակների:

Գագկաշենի եկեղեցական տիպով կառուցվել են նաև Բագարանի Սուրբ Թեոդորոս տաճարը (Պատմական Շիրակում՝ Ախուրյանի աջ ափին, Մրենից 3-4 կմ հեռավորությամբ), Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին (Նոյեմբերյանի տարածաշրջան), Սուրբ Գրիգոր եկեղեցին (Հառիճավանքի մասն է կազմում՝ Արթիկի շրջան):

[1] Վարդանյան Ս., էջ 110:
[2] Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 233:

Անիի 11-րդ դ. եկեղեցիների մեջ ոճական յուրահատկությամբ առանձնանում է նաև Հովվի եկեղեցին, որն իր համաչափ ու բարետես ուրվանկարով իշխում էր երբեմնի բնակելի թաղամասերով ծածկված Անիի հյուսիսային տարածքում: Եկեղեցու կառուցման ճշգրիտ թիվը հայտնի չէ: Ճարտարապետական ու կառուցողական լուծումները հաշվի առնելով՝ այն վերագրվում է 11-րդ դ.[1]: Հովվի եկեղեցին նմանության շատ գծեր ունի Զվարթնոցի, Իրինդի, Գագկաշենի, Ապուղամրենց Սուրբ Գրիգորի, Վահանավանքի փոքր եկեղեցու, Ցախացքարի և նույն կարգի մի քանի այլ եկեղեցիների ու տաճարներին հետ:

Թ. Թորամանյանը, որ տեղում չափագրել և ուսումնասիրել է այս հուշարձանը, համարել է այն միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պսակը, որպես Զվարթնոցի ձևերի մի ինքնատիպ վերարտադրություն[2]:

Չափերով շատ փոքր այս եկեղեցին պատկանում է սյունաձև եկեղեցիների տիպին. արտաքինից եռահարկ, իսկ ներսից երկհարկ էր: Հատակագծմամբ ներսից ու դրսից աստղաձև է, հեռավոր նմանությամբ բազմախորան հորինվածքի, այն տարբերությամբ, որ այստեղ կիսաշրջան խորաններին փոխարինում են վեցթև աստղի միմյանց հավասար եռանկյունաձև թևերը: Դրանցից արևելյանը խուլ է ու ավարտվում է կիսաշրջան մի փոքր որմնախորշով, հարավարևմտյանում բացվում է միակ մուտքը, իսկ մնացածներում՝ լուսամուտներ: Առաջին հարկի (յարուսի) վրա բարձրանում են ավելի քիչ մասնատված երկրորդ և երրորդ հարկերը: Առաջին հարկի պատերի արտաքին կողմը մասնատված է եղել 12 եռանկյունաձև և 6 կիսաշրջան որմնախորշերով, որոնք թեթևացրել և ակնահաճո են դարձրել նրա պատերը: Երկրորդ հարկի պատերն ունեցել են 6 որմնախորշեր, իսկ երրորդ հարկինը՝ ավելի պարզ կառուցվածք: Երկրորդ հարկը պահվում է 6 կամարաձևերով, որոնք միանում են ծածկի կենտրոնում ու ամրացվում փակող քարով, որտեղից մի ժամանակ կախված է եղել մատուռը լուսավորող ջահը:

Ամեն ինչով՝ հատակագծմամբ, ծավալային ձևերով ու միջհարկային ծածկի կոնստրուկտիվ համակարգով, եռաստիճան այս եկեղեցին միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պսակն է:

Այսպիսով, արաբական շուրջ 200-ամյա տիրապետությունից հետո Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայկական ճարտարապետությունը նոր վերելք ու ծաղկում ապրեց, ինչի խոսուն վկան Անի մայրաքաղաքի հարուստ հուշարձանախումբն է: Այդ վերելքի

[1] Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, էջ 126:
[2] Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, II ժող., Երևան, 1948, էջ 49:

համար ստեղծագործական առումով խոշոր նշանակություն ունեցավ 6-7-րդ դդ. ժառանգությունը:

Սակայն, հայ ճարտարապետները, շարունակելով նախորդ շրջանի պաշտամունքային ճարտարապետության ավանդույթները, իրենց գործերում մարմնավորեցին ոճական նոր հատկանիշներ՝ ճարտարապետական համաչափությունների, ներքին տարածությունների պլաստիկական մշակման, աշխարհիկ թեմատիկայի արմատավորման, կառույցների տեղադրման ասպարեզում գեղատեսիլության սկզբունքների կիրառման և այլ միջոցներով:

Անիի պաշտամունքային ճարտարապետության նոր ըմբռնումները հոյակապ մարմնավորում ստացան Տրդատ ճարտարապետի կառուցած տաճարներում: Այդ տաճարները իրավամբ մտել են հայ դասական ճարտարապետության մեջ՝ իբրև նրա փայլուն գագաթներ: Այդպիսի ստեղծագործությունների հիմքում Տրդատը կիրառել է նորարարական սկզբունքներ, որոնք միանգամայն համապատասխանում էին ժամանակի ոգուն:

Հենց Տրդատի շնորհիվ է, որ հայ ճարտարապետությունը լայն տարածում գտավ հայրենիքի սահմաններից դուրս՝ ոճական նախօրինակ հանդիսանալով 12-14-րդ դդ. Եվրոպայում տարածում գտած գոթական ճարտարապետության համար:

Annotation

In work are presented the basic types church building in the city of Ani in IX-XI centuries. Scientifically-historical researches have shown, that each of these churches carries on itself features of the basic types church building in Ani. Later the churches Ani became the first examples in development of all Gothic architecture. In IX-XI centuries only church building in Bagratunyats Armenia, but also in architecture development as a whole the big contribution was brought Trdat by the architect. It is necessary to notice, that main temple Ani and Gagkashen are the largest architectural values.

Аннотация

В работе представлены основные типы церквостроения в городе Ани в IX-XI веках. Научно-исторические исследования показали, что каждая из этих церквей носит на себе особенности основных типов церквостроения в Ани. В дальнейшем церкви Ани стали первыми примерами в развитии всей готической архитектуры. В IX-XI веках ни только церквостроении в Багратунской Армении, но и в развитии архитектуры в целом большой вклад внес Трдат архитектор. Необходимо отметить, что главный храм Ани и Гагкашен являются крупнейшими архитектурными ценностями.